Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 01

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան 11 փետրվարի 2025թ.

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ, 19-րդ, 39-րդ կետերը՝ կայացել է Կառավարման խորհրդի արտահերթ նիստ՝ հեռակա քվեարկության միջոցով:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Դավիթ Խուդաթյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Տիգրան Դադունց	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Տաթևիկ Սարգսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տարոն Հակոբյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Բարդուխ Գաբրիելյան	Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ձկնաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Շահեն Խաչատրյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Սուրեն Մելիքյան	Մանթաշյանց գործարարների միություն
Յուրիկ Հակոբյան	Հայաստանի երկրաբանների միություն ՀԿ
Բացակայում է՝	
Հակոբ Սիմիդյան	ՀՀ շրջակա միջավայրի նախագահ(խորհրդի նախագահ)

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2024 թվականի գործունեության տարեկան հաշվետվությանը հավանություն տալու վերաբերյալ:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման 2024 թվականի 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը հաստատելու վերաբերյալ:

Կառավարման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2024 թվականի գործունեության տարեկան հաշվետվությանը :

Կողմ 9, Դեմ 0

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման 2024 թվականի 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

Կողմ 9, Դեմ 0

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Կառավարման խորհրդի անդամների կողմից օրակարգում ներառված հարցի վերաբերյալ դիտարկումներ չեն ներկայացվել:

Քվեարկությամբ որոշումն ընդունվել է ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող _____ Ա.Մեյմարյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ
(խորհրդի քարտուղար) _____ Վ. Բարսեղյան